ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Հավատարմագրման ազգային մարմին»

ՊՈԱԿ-ի տնօրեն

Գ. Շախկյան
(անուն, ազգանուն)

« 20 » հոկտեմբերի 2025թ.

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

P-02

ՄՇԱԿԵԼ Է

Կառավարման համակարգի մենեջեր

Նազիկ Աբգարյան
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Գործարկման թվականը՝ 20.10.2025թ.

Երևան 2025

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթները

1.1 Սույն քաղաքականությունը մշակվել է ԳՕՍՏ ISO/IEC 17011-2018 ստանդարտի 8.2.3 և 8.2.4 կետերի պահանջներին համապատասխան:

1.2 Քաղաքականության նպատակն է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԱՐՄՆԱԲ) կողմից հավատարմագրված համապատասխանության մարմիններին (այսուհետ՝ ՀԳՄ) հավատարմագրման պահանջների փոփոխությունների վերաբերյալ ժամանակին տեղեկացնելու, այդ փոփոխությունները շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցնելու և դրանց իրականացման համար ողջամիտ ժամկետներ սահմանելու սկզբունքներն ու պարտավորությունները:

1.3 Սույն քաղաքականությունը պարտադիր է ԱՐՄՆԱԲ-ի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների համար, որոնք պատասխանատու են հավատարմագրված մարմինների հետ փոխգործակցության համար:

2. Ծանուցման սկզբունքները

2.1 ԱՐՄՆԱԲ-ն ապահովում է հավատարմագրման պահանջների փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության ժամանակին փոխանցումը բոլոր հավատարմագրված ՀԳՄ-ներին:

2.2 Ծանուցումն իրականացվում է հետևյալ ձևերով.

- տեղեկատվության հրապարակում ԱՐՄՆԱԲ-ի պաշտոնական կայքում,
- պաշտոնական գրությունների (ներառյալ՝ էլեկտրոնային տարբերակով) ուղարկում,
- անհրաժեշտության դեպքում՝ շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների, կլոր սեղանների կազմակերպում:

3. Փոխգործակցություն շահագրգիռ կողմերի հետ

3.1 Անհրաժեշտության դեպքում փոփոխությունների նախագիծը ուղարկվում է շահագրգիռ կողմերին (հավատարմագրված ՀԳՄ-ներին, փորձագետներին, պետական մարմինների ներկայացուցիչներին, ասոցիացիաներին):

3.2 Մեկնաբանությունների ներկայացման ժամկետը սահմանվում է 10-ից 20 օրացուցային օր՝ կախված փոփոխությունների նշանակությունից:

3.3 ԱՐՄՆԱԲ-ը ուսումնասիրում է ստացված առաջարկները և ընդունում է փոփոխությունների հաստատման վերջնական որոշումը:

4. Փոփոխությունների իրականացման ժամկետները

4.1 ԱՐՄՆԱԲ-ը սահմանում է փոփոխությունների իրականացման ողջամիտ ժամկետներ՝ ելնելով դրանց բնույթից և նշանակությունից.

- ընթացակարգային փոփոխություններ՝ մինչև 3 ամիս,
- ստանդարտների կիրառման փոփոխություններ՝ մինչև 6 ամիս,
- նոր ստանդարտներ, կանոններ և կարգավորումներ՝ համաձայն P-01 «Նոր ստանդարտների անցումային շրջան սահմանելու վերաբերյալ քաղաքականություն» և PR-4.6.4 «Հավատարմագրման սխեմաների մշակման, ընդլայնման և դադարեցման ընթացակարգը» փաստաթղթերի,
- օրենքով սահմանված պարտադիր պահանջներին առնչվող փոփոխությունների իրականացման ժամկետները որոշվում են օրենսդրությամբ:

5. Փոփոխությունների կատարման ստուգումը

5.1 ԱՐՄՆԱԲ-ը ստուգում է հավատարմագրված ՀԳՄ-ների կողմից փոփոխությունների կատարման գործընթացը:

5.2 Փոփոխությունների իրականացման ստուգումը ԱՐՄՆԱԲ-ը կատարում է՝

- հավատարմագրված ՀԳՄ-ների կողմից ներկայացված փաստաթղթերի վերլուծության՝ հաշվետվությունների ուսումնասիրության միջոցով,

- պարբերական կամ արտահերթ գնահատման, ինչպես նաև վերահավատարմագրման ընթացքում:

5.3 Փոփոխությունների իրականացման ժամկետների խախտման դեպքում ԱՐՄՆԱԲ-ը կիրառում է սահմանված ընթացակարգերով նախատեսված միջոցառումներ (հավատարմագրման կասեցում կամ դադարեցում):

6. Եզրափակիչ դրույթները

6.1 Սույն քաղաքականությունը հրապարակվում է ԱՐՄՆԱԲ-ի պաշտոնական կայքում:

6.2 Քաղաքականության պահանջների կատարման հսկողությունը դրվում է ԱՐՄՆԱԲ-ի տնօրենի և պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումների վրա:

6.3 Սույն քաղաքականությունը վերանայվում է անհրաժեշտության դեպքում: